ՈՒԽԱՅԸ[1]/ Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի մարդ գալիս ա ըլում, որ տղին ըշկոլումը տա։ Էդ մարդը գնում ա մի ախպրից ջուր խմելու, ասում ա.— Ուխա՛յ, էս ինչ անուշ ա։
Որ ասում ա «Ուխա՛յ, էս ինչ անուշ ջուր ա», մի մարդ ախպրից դուրս ա գալի։
Էդ ախպրից դուրս էկած մարդը ասըմ ա.— Էդ տղեն ո՞ւր ես տանում։
Ասում ա.— Տանեմ ըշկոլումը տամ։
Էդ մարդը տղատիրոջն ասըմ ա.— Ինձի տուր տղեդ, տանեմ կարթացնեմ։
Դա էդ տղին տալիս ա, որ տանի կարթացնի։
Տանում ա կարթացնելու, ինքն աղաքն ա ընկնում, գնում տանում ա մի պռավի տուն։
Պռավն էդ տղին ասում ա.— Քանի,— ասում ա,— սովրիլ ես, ասա չէ, որ ասես՝ սովրիլ եմ, գլուխդ տալ պտի։
Ուխայը քանի տղին ասըմ ա.— Սովրի՞լ էս։
Ասըմ ա.— Չէ՛։
Հերը գալիս ա ախպրի կուշտը ջուր խմելու, խմում ա, ասըմ ա.— Ուխա՛յ, էս ինչ անուշ ջուր ա։
Որ ինքն էսպես ասըմ ա, տղեն Ուխայի հետ ախպրից դուս էկան։
Ուխայը, որ տղին դուս ա բերըմ, հորն ասըմ ա.— Էս ինչ անպետք տղա ա, որ սվորիլ չգիտա։
Էդ մարդը փողն տալիս ա ու իր տղին վեր ըլում տանում։ Էդ տղեն ընկնում ա հոր ետևի կուռը ու գալի։ Խնձորը դառավ հոր աղաքն ընկավ։ Հերը քանի ուզըմ ա խնձորը բռնի, կարում չի։ Ընկնըմ ա փշքի տակը, գալի ետի կռանը՝ տղա դառնում։
Հերը հետ դառավ, տղին ասավ. —Խի՞ չեկար էրկու խնձորը բռնինք։
Տղեն ասավ.— Էկա ոչ։
Գնալիս ճամփին մի ղոչ ա դառնում, հոր աղաքն ընկնում։ Հերը զաջիլ ա գալի, ըլի որ ղոչը բռնի, կարիլ չի։ Հետ եդ ի գալի եդի կռանը, ընկնում մի թփի տակ, տղա է դառնում։
Տղեն ասում ա.— Ապի՛, խնձորն էլ՝ ես, ղոչն էլ՝ ես, հիմի ես կդառնամ ձի, ինձ կտան իրեք հարիր մանեթ, սանձը կը ծախես ոչ։
Որ տանում ա մեյդան, Ուխայը դուս ա գալի, ասըմ ա.— Ի՞նչ տամ ձիուն։
— Իրեք հարյուր մանեթ,— ասըմ ա։
Գալիս է իրեք հարյուր մանեթը տալիս է Ուխայը էդ մարդին, ձին առնում ա։
Ասում ա թե.— Սանձքի գինը ի՞նչ տամ։
Ասում ա.— Սանձքը ծախու չի։
Ուխայը ասում ա.— Երկու հարյուր մանեթ տամ, սանձքը ընձի։
Մարդն ասում ա.— Հինգ հարյուր մանեթ տու, սանձքը քի տամ։
Ուխայը հինգ հարյուր մանեթը տալիս ա, առնում սանձքը, տարավ ձիու ճիտն արավ ու քաշելով տարավ դռան կանգնացրեց, աղջկան ասավ.— Աղջի, թուրը դուս պեր։
Աղջիկն ասում ա թե.— Քտնըմ չիմ թուրը։
Ուխայը աղջկանն ասըմ ա.— Դուն արի ձին բռնի, ես երթամ թուրը դուս բերիմ։
Աղջիկը ձիուն ասում ա.— Իմ ճկատին քացի տուր, փախի։
Էդ ձին քացի ա տալի ու փախչում։

---

[1] Բնագրում վերնագիրը նշանակված է Ուխյակը, բայց քանի որ հեքիաթի մեջ բոլոր դեպքերում օգտագործվում է **Ուխայ**, ուղղել ենք—Ծ. Կ.։

Ուխայը դուս ա գալի, մտիկ անում, տեսնում, որ ձին ղուշ դառած գնում ա երկնքում։ Ուխայը Ալալ[2] ա դառնում, եդնուցը գնում ա, որ ղուշը բռնի։ Որ գնում մոտենում ա բռնի՝ ղուշը մանիշակ ա դառնում, թագավորի աքոշկով վեր ա ընկնում։
Ուխայն էլ աշուղ ա դառնում, գնում ա թագավորի կշտին ա նստըմ, սազն ածում, թագավորին ասըմ ա.— Ձեռքիդ մանիշակն ինձ տուր։
Թագավորն ասում ա.— Տալիս չեմ, փող եմ տալի։
Շատ ասում ա, մանիշակն իրան ա տալի։ Տալիս ա իրան մանիշակը, մանիշակը դառնում ա կորեկ, Ուխայն էլ դառնում ա ճուտը, հավաքում ա կորեկ։ Կորեկը մնում ա մինը, ասեղ ա դառնում, ճուտն էլ դառնում ա թել՝ ասղի ծակը մտնում, ասեղն էլ կրակին ա տալիս, ինքը թելն էլ էրվում ա, ասեղն էլ դուս ա ըլում, պրծնըմ, գնում ա...

[2] Բնագրում մեծատառով է, անհասկանալի է, թե ինչ իմաստ ունի—Ծ. Կ.։